

ՏԱՂԵՔ

ԼԱՆՊԷՍ ՏԱՆՈՐԵԱՅ

Բ. ՏԱՐԻ Դ. ՇՐԶԱՆ.

1863

ԹԻԻ 55. ՅՈՒՆՎԱՐ 1

Պէտքստեայ գինն Ե. Զ. Կարդոն. Իջմիրն գուրա՝ մտքը բաժանորդին ըրայ: Ետարգրութեանց տեղերն են: Իջմիր.
 Կիրիթ Խան Թիւ. 3. Պօշխ. Պ. Մառթեոս Մանուքեան, Գաշգճեցար Խան. Թիւ. 4. Փարիշ, Պ. Ա. Մուրաբեան:
 Հաշեղ. Պ. Յ. Ս. Տիւրքմիտօֆ: Ապերտեգրիս. Պ. Կարադեա Յակոբեան. Գափրէ. Պ. Հաւարշ Բշիպարեան:
 Կիւ. Կօրք. Բնիբիկո. Պ. Խ. Օսկանեան:

Ա. Չ. Ի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ծրվիլ իւր յարդի բաժանորդաց և բարեկամաց աղգաւորական համահրութեամբը այսօր շորբորդ շրջանն ալ թեւակոխելու բարեբաղդութիւնը ունենալով՝ կը փութայ իւր շնորհակալութեան հաստիքը յայտնել այն ամէն անոնց որք ներողամբաութեամբ իւր թերթին անթառամութեանը նպաստեցին բարոյապէս և նիւթապէս:

Իղմիրի ուսումնասէր երիտասարդութեան և մասնաւորապէս քանի մը բարեկամներու խնդիրը չմերժելու համար ստիպուեցանք շրուռնակել թերթիս հրատարակութիւնը՝ առանց նկատելու մեր անձնական զբաղմանց բազմութիւնը և Իղմիրէն դուրս ոմանց մեղ ցուցըցած ազգային ընկալք, որք շատակը ըսենք ոչ այնչափ դիւրանուածելի խոջընդոտներ են խմբադրութեան ըստ ինքեան դժուարին պաշտօնին մէջ:

Իրենց պարտքը դեռ չլծառող մեր յարդի ընթերցողներէն դարձեալ խնդրելով որ հաճին մեր Մեծարդոյ դործակալաց յանձնել զայն, տարւոյս նորոգութեան աթիւ կը մաղթենք մեր բաժանորդաց համար

ԵՐԿԱՐԱՏԵՒ ԿԵԱՆՔ ԵՒ ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ
 Իսկ Ծրվիլ անթառամութեան համար
 1000 ԲԱԿԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ .

Գիտութիւնը աշխարհիս ճակատագիրը կրնայ փոփոխել ամէն օր. ամէն բան կը լուէ անոր իշխանութեան առջև. բացարձակ թաղուհի մ'է այն, որուն վճիռներուն մարդկութիւնը ուշագիր է միշտ: Կարգս ինչ կուզէ թող անօրինէ և գործէ, երբ կը խօսի գիտութիւնը, այն որն որ հասարակութենէ ընդունուած է, անասեն իւր վճիռները օրինադրքի մը յօդուածներ են և մարդս բնութեան և մարդկութեան ծոցը ժամանակիս պարագաներուն և ասոնց հարկաւորութեանցը հետ իւր ներդաշնակութիւնը պահելու համար կը պարտաւորի անոր հրամանաց համեմատ վարուիլ և շարժիլ:

Աշխարհիս վրայ շատ գիտութիւններ երևան ելան և ժամանակ մը քաղաքակիրթ ժողովրդոց ուշագրութիւնը դրուելէն ետք անհետացան՝ այն պատճառաւ որ չունէին մշտասեւութեան թէութիւնը, չունէին այն դրոշմը որով ճշմարտութիւնը կը կնքէ զանոնք և որն որ անոնց էական և առաջին հանգամանքը ըլլալու է:

Ճշմարիտ և անողական է այն գիտութիւնը որուն մարդուս նկատմամբ բարոյական կամ մտական և կամ նիւթական օգուտը կը շոշափուի:

Այս նպատակաւ այլ և այլ գիտութիւններ երկեցան աշխարհիս մէջ, մարդկութիւնը ստիպուեցաւ խոնարհելու անոնց իշխանութեան առջև, և ինչպէս հասարակ, նոյնպէս թաղակիր մարդերու բաղբը ըստ այնմ փոփոխուեցաւ:

Այսպէս ահա գրեթէ կէս դարէ աւելի է որ Եւրոպական ազգերու ընկերային վիճակը յառաջագիտական նպատակաւ փոփոխութիւն կրեց:

Մարդկային ընկերութիւնը օրէ օր իւր հիւսորեայ հիմերուն վրայէն կը սահի կանցնի և ուրիշ գօրաւորագոյն ու հաստատուն հիմերու վրայ կը կանգնէ իւր դիւքը : Այս հիմնական տեղափոխութեան ասոր հետևութեանց առաջքը առնուլ անկարելի է նաև պահակալ իշխանութեանց համար :

Ստուգիւ գիտելու արժանի կէտ մ'այն է թէ գիտութեան իշխանութիւնը 'ի սկզբան եբերուն է, գրեթէ ոչինչ է, և թէ այն ժամանակ իւր ազդեցութիւնը կը բանի ժողովրդոց մէջ երբ մարդկութեան օգուտը նպատակ ունեցող ճշմարտութեանց կարգը կանցնի՝ բանաւորութեան և համագումարի առջև փաստով և փորձով անդրադարձի և անձխտելի իրութիւն մ'երևալով :

Արդ մարդկութեան բարօրութեանը նպաստող գիտութեանց մին ալ Քաղաքական Տնտեսութիւնն է : Այս գիտութիւնը ժողովրդոց և կառավարութեանց հարստութեան աղբիւրն է :

Աշխարհս բնդհանուր մարդկութեան գործաբանն է ուր մշտնջենաւոր գործօնութիւն մը կը տիրէ ամէն գործաւորաց վրայ : Կրնայ ըսուիլ թէ ովկիանոս մ'է այս գործարանը և մարդկութիւնը նաւուղիղ մը : Հոն անվաանգ նաւարկելու համար մարդկութիւնը կրնայ ուղեցոյց ունենալ իրեն Տընտեսական Գիտութիւնը, առանց որոյ ազգ մը չը կրնար իւր նիւթական շահերուն կանոնաւորագէտ և արդիւնաւոր կերպիւ հսկելու : Աճառականութիւնը, արհեստը և երկրագործութիւնը ինչ որ կը շնորհեն մարդկութեան՝ գործնական գիտութեամբ, զայն հարիւրապատիկ և աւելի ապահովագէտ կրնան արտաբերել անտեսական տեսլական գիտութեամբ : Ասոր միայն նպատակը մարդուս նիւթական շահն է, առանց որոյ գժուարին է, չըսենք անկարելի, վայելել բարոյականը և մտականը այս աշխարհի մէջ :

Տնտեսագիտութիւնը պարուս երևելի գրիչներուն, քաղաքագէտներուն և տէրութեանց ուշադրութիւնը գրաւած է : Մեր ազգը, հանրաբար խօսելով, դեռ ոչ կը ճանչնայ և ոչ ալ կը յարգէ զայն, որուն կարևորութիւնը զգալու և ըստ այնմ մեր ազգային էութեան ընթացքը ուղղելու ժամը հասած է ալ : Արդէն քանի մը Հայ թերթեր և մասնաւորապէս Օրօրեանը խօսեցան այս նիւթի վրայ :

Անոնց այս ազգասիրական օրինակին հետևելու փափաքէն մղուելով մենք ևս այսուհետև այս գիտութեան վրայ հետ զհետէ յօդուածներ պիտի թարգմանենք և հրատարակենք Ծաղիկ մէջ, որոնց հեղինակն է Գալէօ քը Ֆրանսի մէջ նոյն գիտութեան

գաստու և Ժո-րնալ ակադեմիական թերթին առաջին շարագիր Պ. Հ. Պատկյար գիտնական Գաղղիացին : Համբաւաւոր հեղինակին աշխատութիւնը արդէն մեծ ընդունելութիւն և յարգ պատճ է բաւլոր Ֆրանսայի մէջ :

Անշուշտ Քաղաքական Տնտեսութեան կանոնաց համեմատ վարուելու համար ժողովուրդ մը այնպիսի թէութիւններ ունենալու է, զորս կրնան ունենալ միայն անկախ ազգերը . . . բայց այս պատճառաւ Հայը չկրնար բոլորովին անտարբեր մնալ այս գիտութեան նկատմամբ. կուզայ օր մը ուր եթէ ոչ լիովին, դէթ մասամբ իւրք կը վայելէ անոր արդիւնքը :

Գահիրէ. Գեկ. 24/6. 1862.

Արդոյ Շարագիր - Տնօրէն

Չեք պատուական օրագրին Եօր թուոյն մէջ Ալեքսանդրիայէն գրուած նամակ մի կարգացինք, որ Գահիրէի մեր ազգայնոց վերայ խօսելով, Գարբիէլ եպիսկոպոսին վերջին մէկ անվայել գործին վերայ կերկնցրնէր իւր խօսքը : Կոյն նա մակին սարունակութեան ամեն մէկ կէտին ճըլմարտութիւնը աւելորդ է հոս հաստատել. ինչու որ այս ընելով Արշալոյսին յօդուածին կերպով մի պատասխան տուած կը լինինք և չենք ուղեր մինչև հոն խոնարհիլ : Արշալոյսին պատասխանել ! Ի՞նչ անվայել գործ ինքզինքը ճանչող մէկու համար ! Սակայն նոյն նամակին հեղինակը թող ներէ մեզ ըսել, որ դեռ շատ բաներ պակաս թողած էր իւր պարմութեան մէջ, և միայն Գարբիէլ եպիսկոպոսին վերայ խօսելով, որուն արդի անվայել ընթացքը կրնայ իւր ծերութեան կամ քաշած հիւանդութեան հետևութեանը տրուիլ, զանց էր առեր բուն քանի մի զլիաւորաց և անոնց նորընծայ - արբանեակ Կամանուէլ վարդապետին ընթացքը մէկ մի աչքէ անցուներու, թէպէտ նոյն վարդապետին մէկ ապօրինաւոր գործը միայն յիշած էր եւրեանցի : Գուցէ հիմայ սա պատասխանը պիտի տրուի մեզ, որ Կամանուէլ վարդապետը այսպէս հասարակաց հանդէսներու մէջ պակուելէն ամենն ին չվախեր, սա պատճառաւ որ ինքը վարդապետ միայն ըլնելով եթէ կը բամբաստի, մինչև անդամ կամողեկոսներ և պատրիարքներ բամբաստեցան, և միթէ մեռան անոնք : — Այո, իրաւացի պատասխան մի է այս, ինչու որ բուն

Եւ մանուէլ վարդապետին բերնի խօսքերն են, և այս խօսքերով է որ կը ջանայ Գաբրիէլ առաջնորդն այ միսթարեւու: Եւ իւր բնթայքէն մատ մի անդամ շտապորեւով, մասնութեան զոճ Միւնատիին բաղդը Օտղիին և անոր նմաններուն ալ ջերմ եռանդով մաղթելու չկասիր, ու առ այժմ կերպով մի իւր իշխանութեան տակ եղող և Օտղի կարգացող անձ մի իւր պաշտօնէն ընէլէն չբաւա կանանալով, իբր խոտվարար և բանասրկու Գաճիբէէն իսկ կ'ազսորէ զան: (Ա)

Արդոյ Պարոն, եկեղեցականի մի ընթացքին վերայ այսքան խօսելուս, որ վատնուած մերանը իսկ չ'արժեր եթէ նոյն եկեղեցականին վարքը ընդհանուր ժողովրդեան մի վերայ չ'ազդէ: Բայց ինչ որ ընի, այս կողմերէն գրուած նամակներուն բոլորն ալ այս տեսակ լուրեր տալն կրնայ թէ ձեզ և թէ ձեր ընթերցողաց ձանձրութիւն աւալ: Այս յայտնի է որ Գաճիբէի Հայոց վիճակը մեծ արտմութիւն պատճառած է Հայ սրտերու, ինչու որ ինչ քանի կ'պատկեր անի: Ուստի կարծէ որ նոյն արտմութիւնը կերպով մի թեթեանայ խօսելով քիչ մ'ալ դարձեալ այս կողմերուն Ալեքսանդրիոյ Հայոց անդորր և գովելի վիճակին վերայ, զոր վերջերս Գաճիբիցոց կողմանէ փորձեր չ'պահսեցան ճիմն 'ի վեր տապալելու, բայց փառք Ալեքսանդրիացոց ջանից, առաջինք իրենց բռնաւորական կամօքը մընալով, ակռանին կ'ճրտեւէն զատ ուրիշ բան չի կրցին ընել: — Այս անցից պատմութիւնը որ շատ ճետաբարբաղական է, կարծէր հոս ընել, բայց այս սողերս գրողին միտքը բարի լուրեր տալ ընելով և միայն ակամայ իւր նպատակէն այսչափ շեղելուն, առ այժմ զանց կ'առնէ խոստանալով սակայն ուրիշ զատ յօդուածով մի նոյն գիտաց վերայ ընդարձակ խօսիլ, ապաճով ընելով, Արդոյ պարոն, որ ինչպէս ներկայիս նոյնպէս անոր ալ ձեր ազատ օրագրին մէջ անկիւն մի չէք զլանար շնորհել:

Ալեքսանդրիոյ Հայոց անդորր և գովելի վիճակին վերայ խօսինք, ըսուեցաւ վերը: — Ի՞նչ է ժողովրդեան մի անդորր վիճակը. ինչպէս կը լինի գովելի վիճակը: — Առաջին հարցման պատասխանն է, Մեր և Միաբանութիւն, սրով ժողովուրդը զոճ և հանդիստ, ոչ թէ 'ի քուն ե-

1) Այս անձը Պ. Մենքերիմ անուամբ կ'Պօրեջի կրիստապօղ մի է, որ Գաճիբէն արտորուելով Երուսաղէմ գնաց:

ղածի պէս, այլ արթուն, ամեն եղածներուն վերահասու, պէտք եղած ատեն խօսքի տէր և միշտ իւր իրաւանց պաշտպան, որով ամեն գործ կանոնաւոր ընթացքի մէջ, ազգին նիւթական վիճակը օրէ օր լաւանալու վերայ, այսինքն եկամուտները այսինքն հարստութիւնը, որմէ յառաջ կր գայ բարոյական վիճակին այ լաւութիւնը: — Ի՞նչ է վերոյիշեալ երկրորդ հարցման պատասխանը: — Ս. Ժողովուրդը իւր միշտ խօսքի տէր և միշտ իշխող ըլնելն զիմնալն բաւական չէ, խօսելու և իր իշխանութիւնը վարելու կերպն ալ զիմնալ պարտի: Եթէ այս չ'գիտէ՝ վայրենի կը կոչուի, եթէ գիտէ՝ քաղաքակիրթ և ազաա: Ալեքսանդրիոյ Հայ սղաթիկ ժողովուրդը այս անդորր վիճակը, ուրախ սրտիւ կըսենք, լիօրէն ունի: Արկորոգ վիճակին ալ անէրն է: — Այժմ: Ալեքսանդրիոյ Հայը ոչ միայն իւր իրաւունքը սկսած է ճանչել, այլ զայն վարելու կերպն ալ: Ուստի ինչ կընէ՝ նախ Գաճիբէի բռնութենէն կ'ազատէ ինքզինքը. երկրորդ գիտելով որ կղերը իւր ձեռքն է և ոչ թէ ինքը կղերին ձեռքը, անոր իւր եկեղեցիէն և աղօթքէն գուրս ամենեւին ուրիշ գործի մի խանուել չար, որով կը վաստկի կոխներու և երկպատակութեանց դադարումը, և ետքէն կիմանայ որ ժողովուրդ մի միշտ սիրով, միշտ միաբան կըլնի եղեր եթէ կղերին մատը վերնայ անոր վրայէն:

Ալեքսանդրիոյ Հայը իւր թուոյն համեմատ ազգսյին վարժատուն մի ունի ամեն ուզուած պայմաններով, ուր իւր որդիքը ձրի կը կրթուին: Ամեն բանէ աւելի իւր հոգեբուն և ճիղերուն առարկան է իւր մանկանց մտաց մշակումը, և Հայերէն լեզուն իւր մէջ ընդհանրացունեն, որ առաջներն բուրրովին մտոցուած և արպիւրէնը ախրած էր անոր տեղ: Եւ յիբաւի սրաառուչ է ժողովրդեան բերկութիւնը ու խնդումը երբ իւր որդուց մաքուր Հայերէն խօսիլը կը լսէ: Եւ վերջապէս ատեններէ 'ի վեր իւր ազգութիւնը մտնալով, անանուն ապրելէն ետ, հիմակ իմացած է, եթէ ոչ ոչ, գոնէ ազգութիւն մի ունենալը:

Չենք վրիպիր եթէ ըսենք որ Ալեքսանդրիոյ Հայը այս յուսատու վիճակին մէջ մտած է Գաճիբէի բռնութենէն ինքզինքը ազատելէն 'ի վեր, և հետեւաբար կրկին իւր առաջին յուսաճատ վիճակին մէջ գլտորելուն բնաւ տարակոյս չիւայ այն օրը որ Գաճիբէի բռնութեան գլուխ ծուէ:

Այս սողերս գրողին ակամային զարկած է նաև Ալեքսանդրիոյ մէջ Հայ մամուլ մի հաստա-

տելու գիտաւորութեան խօսքեր, և մասնաւոր ասոր համար ընկերութիւն մի հաստատելու փսփոտութեան: — Ժողովագրեան մի հաղիւ ականջի զարնող փսփուրքը իսկ մութը սիրողները ահաբեկ կընէ:

Ալեքսանդրիոյ Հայր այս յուսատու ընթացքին մէջ մանեւէն 'ի վեր կ'զգար պինա հարկաւոր բանի մի, այսինքն ազգային չքաւոր անկարից ապաստարանի մի պինա հարկաւորութիւն ունենալը: Բայց դանք որ այս պեղեցիկ գործոյն բարի կամքէ զատ ամեն բան կը պակսէր: Այս պէտք էր նոյն հաստատութեան մասնաւոր շէնք մի, որ չկար. և այս միայն ընդհանուր կամքը և փափաքը կը թուլացնէր: — Աս ալ չմտնանք ըսել անցնելով, որ Ալեքսանդրիոյ Հայր այս տեսակ գեղեցիկ հաստատութեանց որչափ փափաքող է, այնչափ 'ի ձեռնարկութիւն դանդաղիտա և վըհաստ. բայց այս ալ դարձեալ բարի նախանձով մի, այսինքն ընկերք ծախիւք ազգին գոյից պահասում մի չարաճառելու համար: Սա միայն չմտածեր որ գոյից շատութիւնը ինչ օգուտ, եթէ պէտք եղած ատեն դարձեալ 'ի նպատ ազգին չգործածուին անոնք: — Երուսաղէմ' և ուրիշ տեղեր զիջուած գանձերը ինչ օգտաւէտ գործեր չէին կրնար ընել ազգին. . . . : — Այս այսպէս ըլնելով եթէ գանուի անանկ մէկը որ ազգին գործերը իւր ձեռքը ըլնելով, համարձակի ուզուած գործոյն ձեռնարկութեան մէկուն մտիկ չընելով, ու իւր կողմանէ իսկ զօհեր չինայելով 'ի կատար անէ, ալ ամեն բան կը մոռցուի, ալ շնորհակալութիւններէն և գովասաններէն չիցուիր: Այսպէս եղաւ Ալեքսանդրիոյ մէջ ամեն ազգային կալուածոց շինուելու ատեն. այսպէս եղաւ նաև վերոյիշեալ անկարից ապաստարանին շինուելու մասին, մինչև որ ազգային գործոց հոգաբարձու Սեփակապետի Աուպար պէյին փոխանորդ Արդոյ Զակոբեան թաղուոր աղան, ինչպէս միւսերուն, այս շէնքին ալ կառուցմանը ձեռք զարկաւ Աուպար պէյին բաշակալութեանը: Շէնքը արդէն կիսով չափ շինուած էր, երբ Աուպար պէյը դարձաւ իւր ճամբորդութենէն: Տեսաւ հաստատութիւնը, հաւնեցաւ ինչ գիտաւորութեամբ շինուած ըլնելը և արդէն ինքն ալ իւր հանդուցեալ եղբօր Առաքել Պէյին յիշատակ մի ընելու գիտաւորութիւնն ունենալով և մտածելով որ ասկէ աւելի աղէկ յիշատակ մը չկրնար ընել, շինութեան բոլոր ծախքը իւր քսակէն վճառելուն հրաման տուաւ, ասկէ զատ տարեկան ԾՅական ստերլինի եկամուտ մը կա-

պէց ազգին չքաւորաց բաժնուելու համար:

Ալ երեւակայեցէք, Զարդոյ Պարոն, Ալեքսանդրիացոց ուրախութիւնը և շնորհակալութիւնը. . . . :

ՊԵՐՃ.

ՓՈՒՐԻՉԸ ԵՒ ԻՌԻ ՄԷԿ ԵՕԻՌԵՒՄԸ

Փորձ ազգօգուտ լրացրոյն ՏԶԲԳ թիւին մէջ յօդուած մը կը կարդանք ուր Արդոյ խմբագիրը Ազիպտոսի առաջնորդ Գաբրիէլ եպիսկոպոսին նկատմամբ Պաշի և Արալուոյ մէջ ծագած վէճին իրաւարար և անաչառ դատաւոր կանդնիլ ուզելով իւր դատունեքը Իրանայի հրատարակութեան օրինաց վրայ կը կոթնէ և վճարանող կողմանց իւր վճիռները կու տայ: Քանի որ իբր դատաւոր կը յայտնէ իւր թուիքը և ըստ այնմ կորոշէ խնդիրը, մեզ տուած վճիռը ընդունելէ առաջ իւր թուիքը քննելու և հերքելու կամ ընդունելու իրաւունքը ունինք: Փորձի՛ յայն յօդուածը վեր 'ի վերոյ ընթերցող մը հեղինակին իւր առարկութեանց և դատողութեանց մէջ զոչուշաւոր և անկողմնագահ ընթացք մը բունելու ջանք ըրած ըլլալը թէև կը նշմարէ, բայց ուշի ուշով կարգացող մը առանց վարանելու պիտի խոստովանի մեզի հետ թէ անոր անաչառ դատունեքուն կշիռը մերթ ընդմերթ պակասելի Արալուոյ կողմը կը հակի:

Փորձը այն յօդուածին մէջ կըսէ.

«Ամբաստանող կողմը (Պաշի) հրատարակութեամբ խօսելով ժողովուրդը գայթակղեցրնելէ առաջ կը սարաւաղէր դատար ազգունութեամբ ազգին դատաւորացը յանձնել. . . . »

Ամբաստանեալը աստիճանաւոր եկեղեցական մ'ըլլալով յայտնի է թէ անոր դատաւորները կրօնական իշխանութիւնն է: Արդ կը հարցնենք Փորձին թէ մեր կրօնական իշխանութիւնը մինչև հիմա երբ մասնաւորի մը բողոքը ընդունելու ամբաստանեալ եկեղեցականի մը յանցաւորութիւնը հրատարակելու պատճեռ է: Սիթէ 4-3 տարիէ 'ի վեր այսպիսի ամբաստանութիւններ չեղան, և եթէ եղան, միթէ այն ամբաստանութեանց ամենն ալ անտեղի և անհիմն էր. թող ըսեն ուրեմն մեզի թէ ո՞վ է այն կրօնաւորը որ եկեղեցական իշխանութեան առջև ամբաստանուած, յանցաւոր դատուած ու սրտժուած է: Այլ սակայն մենք պատրաստ ենք 'ի պահանջել հարկի այնպիսի անուններ տալու որոնք իրապէս յանցաւոր էին և որոնց ամեն-

բըն ալ կամ անպատու հաս ազատած են կրօնական տոնանէն . կամ անմեղ հրապարակուած են և կամ թէ անոնցմէ ոմանց յանցաւորութիւնը եթէ երբէք հաստատուած է , գէթ անոնց պատժուելուն համար տրուած վճիռը անպորձագրելի մնացած է : Արեւմն մասնաւոր բողոքարկուներու այս տեսակ ամբաստանութիւնները քանի որ ապարդիւն կը մնան , ո՞վ ուրեմն պատժելու է յանցաւորութիւնը . - Անշուշտ պատմութիւնը , անշուշտ մամուլի շանթը որ արդարութեան կշիռը ու ամբարշտութեան խրատելակն է :

Քիչ մը վար յիշեալ թերթը կը յաւելու . « Հրապարակային թերթ մը մէկու մը յանցաւորութիւնը չկրնար հրատարակել մինչև որ տեսչութիւնը զայն հաստատէ ու չհրատարակէ » :

Այս օրէնքը աւելի աշխարհական և մասնաւոր անձերու քանթէ կրօնական և հասարակային սղաւտոն վարող անձերու համար կրնայ ընդունելի ըլլալ : Իրանայի մէջ եթէ այգախի օրէնք մը կայ , Տաճկաստանի համար օրինաւոր և ընդունելի չը կրնար ըլլալ այն : Օրէնք մը ամէն տեղ գործադրելի և հանրութեան ընդունելի ըլլալու համար պէտք է իրեն հիմ ունենայ արդարութիւնը և իրաւունքը , պէտք է որ ընդհանուրին կամքովը ու հաւանութեամբը օժուած ու հաստատուած ըլլայ այն , և Իրանայի Օրէնսդիր ժողովը անշուշտ Տաճկաստանի բնակչաց կամքը հարցուցած չէ որ իւր օրէնքը հաս ալ ընդունելի և հնազանդելի ըլլայ՝ առանց Օսմանեան կառավարութեան վաւերացմանը : Օրէնքի մը գործադրութիւնը իշխանութեան ձեռքն է , այլ ընդունելի ըլլալը հանրութեան դիտնալու բանն է : Հանրութիւնը կընդունի զայն երբ արդարութեան վրայ հիմնուած կը տեսնէ : Արդ արդարութիւնը և իրաւունքը կը պահանջէ որ յանցաւոր մը , հանրութեան շահուն թշնամի մը պատժուի , տեսչութիւնը չուտար այս պատիժը , և մամուլը արդէն դիտնալով զայն՝ կելնէ հասարակաց կարծեաց զատաստանարանին մէջ կը պատժէ զայն՝ սրբազան պարտ մը կատարած ըլլալու համար : Արեւմն Իրանայի օրէնքը երբ այս պարտաւորութեան կատարումը կերպիւ իւրի կը զըլանայ , մամուլի գերազայն իշխանութիւնը կուրանայ ու պատմութեան ձեռնահասութիւնը կը մերժէ , ինչպէս արդարութեան վրայ հիմնուած կըլլայ այն , և եթէ չէ , ինչպէս ընդունելի կրնայ ըլլալ :

Բարեկարգ երկրի ու ազատ երկրի մը մէջ մեծ տարբերութիւն կայ : Ստուգիւ բարեկարգ է Իրանսա , այլ ստուգապէս դիտենք որ հոն մամուլի ա-

զատութիւնը զրաքննութեան ճնշումը կը կրէ : Արկիր մը բռնութեան տակ կրնայ ըլլալ բարեկարգ . այլ ոչ երբէք ազատ և կրնանի ղեղեղեկապետի մարմինի մը որուն կեանքը կը պահի : Փարիզը ազէկ կրնէր եթէ Անգլիայի . Պէլքիպայի և Հօլանտայի մէջ մամուլի նկատմամբ դրուած օրէնքը մեղ յիշեցնէր , վասն զի կարծեսք դիտելինքն ալ թէ Իրանսա մինչգետ Աուի Արդի գաւազանէն կը սարսէր , մամուլի ազատութեան դրօշը արդէն Հօլանտայի և Անգլիայի մէջ կը ծիփար : Արդ աս երկիրներու մէջ ինչ կը հրամայէ օրէնքը հրապարակային գրիչներու : Անգլիայի մէջ ելին , ուզած թերթի հրատարակէ , քաղաքական , բանասիրական , վերջապէս ինչ տեսակ թերթ կուզէ թող ըլլայ : Կառավարութիւնը միայն մէկ բան կը պահանջէ խմբագրէն , այն է գումար մը յանձնել իրեն՝ իբր երաշխաւորութիւն և ապահովութիւն : Հոն խմբագիր մը ազատ է գրելու ու տպելու լրագր և գիտցածը , յայանելու որ և է մէկու մը յանցաւորութիւնը , նաև հրութեան առաջին պաշտօնէին ընթացքը խմբածելու և յանցանքը երևան հանելու : Խմբագրին իշխանութիւնը իրաւունքը և ճշմարտութիւնն է և այս իշխանութեամբ կանգոնէ անիկա բռնութիւնը : Բայց վայ իրեն եթէ կը զրոյարաւէ կամ յանիրաւի կամբաստանէ : Հրապարակային գրիչները Իրանայի մէջ այսպիսի իրաւունք մը կը վայելեն . ըստ լիցի : Աթէ ուրիշ ազգերու թերթերը կրօնաւորաց յանցաւորութիւնը չեն հրատարակէր , ինչպէս կը կարծէ Փարիզը , պատճառը ոչ թէ իրաւունք՝ այլ ազատութիւն չունենան իրեն : Ինչպէս Անգլիա , նոյնպէս Պէլքիպայ այս իրաւունքը կը շնորհէ մարդկութեան , այլ Իրանսա կը զըլանայ : Կեր յարդի պաշտօնակիցը անշուտ կարգացած ըլլալու է Հոլանտայի ինքիլ անունով ազատաբոյր գիւրքը ու անոր հեղինակ Լաւմանա Ապու ազատաւեր գրողէն ալ ծանօթ է անշուշտ իրեն : Այս գիրքը Պապական կառավարութեան դէմ է և ազատամիտ հեղինակը անոր ամէն տեսակ զեղծումները երևան հանելով Կարտինալ Անտօնիլի և անոր նման բարձրաստիճան անձանց վրայ այնպիսի ամբաստանութիւններ կը գիղէ , այնպիսի ապիրատութիւններ կը պատմէ դորս լիշելու ատեն անգամ՝ զանիլ՝ կղզանք : Այս գիրքը անպատասխանի մնաց և հետզհետէ դէպքերը եկան հաստատեցին հեղինակին ըսածները : Ասիկա որ անշուշտ մեզի պէս սահմանը նեղ խելքի աէր մարդ մը չէ , դիտէր թէ իւր պարտքն էր խօսիլ և օգնել տառապեալ ժողովուրդի մը ազատութեանը :

այլ սակայն չկրցաւ Պրանսայի մէջ հրատարակել իւր գիրքը և Պրիսէլի մէջ ապել տուաւ զայն : Անթիւ օրինակներէն միայն մէկը յիշել արժան դատեցինք . աւելի երկար խօսիլ չենք ուզեր յայտմանին ու մեր նպատակէն շեղիլ : Այս միայն գիտենք թէ իրաւունքը ամենուրեք պաշտելի է և ամենուն համար հաւասար : Տեղ տեղ կը ճնշուի եղեր այն , այս ճնշումը չկրնար օրէնք ըլլալ մեզի համար . եթէ ստիպուինք զոչեւու այս իրաւունքը , անատեն նախապատիւ է խօսելի դադրիլը : Փրէշը զարձեւալ Պրանսայի մամուլի օրինաց վրայ կոթնելով կըսէ . « Խմբագիրները պատասխանատու են անանուն նամակաց » :

Այս շմտանք յիշելու թէ Պրանսայի մէջ նորահաստատ է այս ծրէնքը և Աբրուսի կայսեր քաղաքականութեան հետեւիքը : Ազատական թերթերը ժամանակին բողոքեցին այս օրէնքին դէմ . իրաւունք ունէին թէ ոչ քիչ մը վարը կը հաստատենք :

Տաճկաստանի մէջ չկայ անանկ օրէնք մը որով խմբագիրք ստիպուին անպատճառ հրատարակել իրենց նամակագիրներուն անունը : Խմբագիր մը ստուգիլ պատասխանատու է իւր թերթին ամբողջ պարունակութեանը : Պատասխանատու է անիկա երբ անունով կամ անանուն կը հրատարակէ այնպիսի յօդուածներ , ուր հասարակաց բարոյական և նիւթական շահը գրկանք կը կրէ և այս պատասխանատուութիւնը ոչ միայն հասարակութեան այլ նաև Տեսչութեան ալ արջնէ : Բայց ինչպիսի մասնաւորի մը բարոյական կամ նիւթական շահուն վրայ եթէ ըլլայ , անատեն պատասխանատու ամբաստանութեան հեղինակն է և ոչ թէ խմբագիրը : Ասիկա եթէ հասարակաց շահուն պաշտպան է իւր թերթովը , յայտնի է թէ հասարակաց բարոյական և նիւթական շահուն հսկելու պաշտօնը և սարտաւորութիւնը կենթադրեն ոչ միայն ազգայնութիւնը շատագուցի և հանրացրնել , այլ նաև գէշութեան առջքը առնուլ և անհետացնել : Խմբագիր մը եթէ իւր նամակագրին անունը հրատարակելով պիտի կրնայ ազատիլ պատասխանատուութենէ , ինչպէս կը կարծէ Փարիշը , ինչո՞ւ ուրեմն անիկա չպիտի ազատի՝ եթէ չհրատարակէ զայն՝ քանի որ նամակագրին ստորագրութիւնը իւր քոֆէ և ի պահանջել հարկի կրնայ Տեսչութեան հրամանաւ ամբաստանեալին յայտնել : Եթէ օրէնքը մարդկային-ընկերութեան շահերը պաշտպանելու նպատակաւ կը հաստատուի , կը համարձակինք պնդելու թէ վստահելի անձի մը գրութիւնը անանուն հրատարակելու արտօնութիւնը փրկաւէս օրէնք մը

կրնայ ըլլալ մարդկութեան համար , մինչդեռ այն արտօնութեան տարակալութիւնը կրնայ մնասարեր ըլլալ մարդկային ընկերութեանց : Բացառենք մեր միտքը օրինակաւ մը :

Օրբաւոր և գազանաբարոյ թշնամիներէ շըրջապատեալ ընկերութեան մը մէջ կը դանուիմ , ուր ասոր թշուառութիւն տուող ապիրատութեանց ականատես եմ և որոնց առաջքը կրնայ առնուիլ ու ընկերութիւնը ազատել եթէ նոյն ապիրատութեանց դէմ բողոքեմ մամուլի միջոցով , քանի որ ուրիշ կերպով ձայնս լսելի ընելու անկարող եմ տկարութեանս պատճառաւ : Արդ կը հարցնեմ հիմա թէ անանուն նամակաւ մը բողոքեիս լուսագոյն չէ՞ քան թէ նոյն գազանաբարոյ թշնամիներէն վախնալով և անունս հրատարակելու համարձակելով լռելու :

Այլոյնիկան մ'անդամ չեմ դեղևիւր ըսելու թէ այս երկու ենթագրութեանց առաջինը բնծրելի է և օգտակար՝ այն թէութեամբ որ նամակագիրը վստահելի ըլլայ , ու իւր ստորագրութիւնը խմբագրին յանձնէ՝ ի պահանջել հարկի գինքը պատասխանատուութենէ ազատ պահելու համար :

Սեր յարգի պաշտօնակիցը կը հաստատէ թէ անձի մը յանցաւորութիւնը հաստատելով հրատարակել այն ատեն ներելի է երբ դատաւորք կը քննեն , կը դատեն ու կը դատապարտեն :

Այլոյնիկան մը միայն համամիտ կը ըլլանք իրեն հետ . բայց անատեն իրաւունք կուենանք հարցընելու իրեն , Փարիշի խմբագրին , թէ ինքը ինչպէս հրատարակած է և դեռ կը հրատարակէ այնպիսի նամակներ ուր խտիւ ամբաստանուած և դատապարտուած են թէ մասնաւոր և թէ հասարակային սոցալտոն վարող աշխարհական ու կրօնական անձեր : Թող ըսէ մեզի Փարիշը թէ Պայրամանը զոր դատաւորաց ատեանին մէջ դատուեցաւ , յանցաւոր ելաւ որ իւր յանցաւորութիւնը յայտնող նամակ մը հրատարակեց իւր թերթին մէջ : Գերմանիկցի Տէր Յովհաննէս Եպիսկոպոսին շողոքորթութիւնը , (շահամուլութենէ ծանր յանցանք) « Սու նուիրակ Գեորգ վարդապետին Ս . Աթոռին համար հաւաքած բազմագումար դրամը զեղխութեամբ վայելած ըլլալը » , որ դատաւորաց ատեանին մէջ հաստատուած , որոշուած ու հրատարակուած է , վստահի Փարիշը այս անձերուն յանցաւորութիւնները յայտնող նամակներ հրատարակած է :

Արդ յայտնի է թէ Օպարիշի ալ իրաւունք ունէր Գաբրիէլ Եպիսկոպոսին յանցաւորութիւնը յայտնող նամակները և լուրերը հրատարակել : Փ

ընդ գույքէ ըսէ թէ իւր հրատարակած նամակները անանուն չնն :

Արեւմտեան խմբագիր մը կրնայ եղեր որ և է միւր յանցաւորութիւնը՝ առանց դատաւորներու վճռին ստատելու հրատարակել, բաւական է որ հրատարակութիւնը ստորագրութիւն ունենայ . ըսել է թէ պատասխանատուն մեր թղթակիցը ըլլայ կամ մինք , հոգ չէ , կրնանք եղեր Պարբերէլ Ապիստոլոսին յանցաւորութիւնը հրատարակել՝ առանց ազգին դատաւորացի զիմելու հաբկաւորութեան , և որովհետեւ մեր թղթակիցին ստորագրութիւնն ալ ունինք , ու մեր աղատ արամագրութեան ներքեւն է , ուստի կամ Ֆրանսայի մամուլի օրէնքը արդար չէ և կամ թէ Փոլիտիկալ նոյն օրինաց չհնազանդիր :

Մենք կը կործենք թէ Ֆրանսայի մամուլի օրէնքն է մեզ գիմահագորդը և ոչ թէ Փոլիտիկալ : Ամբատանեալը կրնայ ըլլալ այնպիսի անձ մը որ իւր դատաւորաց վճիռները կ'անդօսնէ , անոնց զինքը դատելու ձեռնհասութիւնը չճանչնար , զինու զօրութեան կ'ապուինի , կամ թէ այնպիսի անձ մը որուն ատենի մը առջև ներկայանայ , դատուիլը ու դատապարտուիլը դժուարին կամ անհնարին և կամ վտանգաւոր է : Մամուլը՝ որ դատաւորներու անաչառագոյնը ու զօրաւորագոյնն է՝ չ'սքարաւորիր ուրեմն ինքնին այնպիսի անձի մը յանցաւորութիւնը ստուգել և հրատարակել : Վեհասպետ մը , իշխան մը , տէրութեան պաշտօնեայ մը , կաթողիկոս մը , պատրիարք մը և առնոյ նման աստիճանաւոր մարդիկ թէ յանցանք մը գործեն , միշտ անսնուած է որ զիրենք ամէնէ յառաջ ամբաստանելու համարձակողը մամուլը եղած է :

Մանչեսթըր յաջորդ խումբ :

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԵՐԱԿՈՒ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Վիճակիս Արքազան Առաջնորդին կողմէն զրկուած մասնաւոր հրաւիրադիրերու համեմատ ամսոյ ճին Առաջնորդարանը ընդհանուր երեսփոխանաց դումարում մը տեղի ունեցաւ , որուն նըպատակն էր ներկայ տարւոյս համար Քաղաքական ժողովը վերակազմել : Հրաւիրելոց թիւը 90ի չափ էր . առնոյ քառասունը հինգը երեսփոխան են՝ թեմերէն ընտրուողներն ալ 'ի հաշիւ առնելով , և որովհետեւ ըստ կանոնագրութեան այնչափ անդամակից չունին անոնք , կը փափաքէինք զիտնալ թէ ինչ նպատակաւ հրաւեր զրկուած էր նաև անդամակից չեղող անձանց : Ինչ և իցէ Իզմիրի Հայերը Սահմանադրասէր ըլլալով արդէն բարեկոյս

էինք թէ անցեալ տարուան պէս Արեւփոխանական ժողովը քուէարկութեամբ պիտի հաճի կազմել Քաղաքական ժողովը՝ ըստ կանոնի Յը վիճակաւ և վեցն ալ քուէով ընտրելով :

Քուէն մեր ազգային կանոնագրութեան հոդին է . անով ազգային գործերու տեսչութիւնը արժանաւորաց ձեռքը կը յանձնուի , մինչդեռ առանց քուէի նոյն տեսչութիւնը ազգեցութիւն ունեցող բայց անարժան անձերու ձեռքը կ'անցնի և ազգային օգուտը մասնաւորին կը զոհուի :

Արդ հրաւիրեալներէն քանի մը անձինք առաջարկեր են քուէարկութիւնը վելյնել և նորէն տասներկու անգամ ընարէլ Քաղաքական ժողովը կազմելու համար : Բարեբաղդարար այդ անձանց թիւը փոքր է և սիրելի է մեզ յուսալ թէ հակառակասիրութիւնը և ատելութիւնը մոտնալով պիտի հաճին համամիտ և համակարծիք ըլլալու միւս անդամաց հետ , որոնց թիւը մեծագոյնն է և որք ազգային կանոնագրութիւնը անխախտ պահել կ'ուզեն ազգասիրաբար :

Մեր սրբազան Առաջնորդը անշուշտ գիտէ թէ քառասուն ու հինգ երեսփոխանները 2500 ընտանիք կը ներկային երեսփոխանական ժողովին մէջ , անշուշտ գիտէ նաև թէ Այօլէն հրաման չեկաւ իրեն Իզմիրի ազգային վարչութեան կերպը փոխելու հաւանիլ , թէ ինքն է հսկող ազգային կանոնագրութեան գործադրութեանը և պատասխանատու ոչ միայն Իզմիրի այլ և բոլոր Հայ հասարակութեանց առջև , վասն զի եթէ յառաջադիմութեամբը պարծող Իզմիրի Հայը մերժէ քուէարկութիւնը , յետոյ կ'մ գաւառները անշուշտ իւր օրինակին կը հետեւին և ասոր հետեւութիւնը կրնայ շատ վնասակար ըլլալ արդէն խեղճ Հայոց ապագային :

Ար լսենք թէ խումբ մը երիտասարդներ արդէն բողոք մը կը պատրաստեն քուէարկութիւնը վերցնել ուզող անձանց դէմ : Այդ բողոքը թէև չտեսանք տակաւին , բայց մենք ալ համամիտ կը հրատարակենք ինքզինքնիս՝ ապագային մէջ յակաւնէ անուանէ խօսելու և ազգային ազեղից նոր վիճ մը բանալ ուզողները հասարակաց կարծեաց դատարանը հրաւիրելու և դատապարտելու իրաւունքը ունենալու համար :

10 Յունվար

Իւր ազգասիրութեամբը Իզմիրի Հայոց ծանօթ Մեծարդոյ Սարգիս Աղա Տիրացուեանը Աղքատասիրաց ընկերութեան անդամ ընտրուեցաւ : Յիրաւի այսպիսի ազգասէր և յարգի անձանց անդամութիւն

նը օրէ օր նոյն ընկերութեան համարումը և զօրութիւնը կ'աւելցնէ :

ԹԱՏՆԲԱԿԸՆ

Յունվարի սկիզբէն մինչև այսօր արուած ներկայացումներուն նիւթերն են Արշակ Բ. Վախրաճ. Փրակչաճադի Բիմի. Երկր. Յանապետ և նոր զաւեշա մ'ալ որ է Համարութեան վարչարարութիւնը :

Այս ներկայացմանց մէջ նշանաւոր հանդիսացաւ դերասանայեա Պ. Յ. Վարդուկեան և Իզմիրցիք ալ սկսան մեծ համարում ունենալ իւր վրայ: Ստուգիւ կամք և յօծարութիւն երբ չպակտիր արդէն յարմարութիւն ունեցող դերասանի մը վրայ, անկարելի է որ կատարելապէս չյաջողի անկիա իւր ձեռքուն և շարժումներուն պարզութեան և խօսքերուն արտաբերութեանը մասին: Միւս դերասանաց վրայ նորէն գիտողութիւն ընել աւելորդ է, ըստ որում արդէն անոնց վրայ ըսուած է ինչ որ պէտք է ըսուիլ:

Երբ յիշատակապէս ներկայացումը մեծ ընդունելութիւն և համարում գտաւ, բայց ուշ ուշով մտադրութիւն ընելու ժամանակ չունեցանք և հետևաբար երկրորդ ներկայացման կ'սպասենք ամէն մէկ անձանց վրայ մասնաւորապէս խօսելու համար:

Յունվար. 10

Յարգոյ խմբադիր "Ծաղիկ" ազգօգուս հանդիսի. —

Յաւօք սրտի կիմացընեմ Մեծարգոյ Ազգայնոց, որ Գարուն Հայաստանի զօրաւոր ազգեցութեան մի հպատակելու հարկադրելով՝ կը ստիպուի իւր ընթացքը ակամայ դադրեցընել, իւր իննամսեայ հասակին մէջ:

Այս առթիւ կը փութայ Գարունը իւր մասնաւոր շնորհակալութիւնը իւր Յարգի և Ազգասէր բաժանորդներուն յայտնելէ ետք՝ խնդրել անոնց մէջ (որոնք որ դեռ չվճառած են Բ. Արջանին վեցամսեայ գինը) որ գէթ իւր իրաւունքը՝ այսինքն իւր եռամսեայ թիւերուն արժէքը (որ է 3 Ֆրանկ) բարեհաճին վճառել և իւր ունեցած պարտոց քիչ

մը թեթեւութիւն ալ, որով շնորհակարտ պիտի ընեն զիս,

Մնամ միշտ

անձեանուէր ազգիս

Գր. Պ. Պարտիզյանեան

Հարազիր - Տնօրէն Գարնան.

Չմիտնիս,

Դեկտ. 10/20 1862.

1863 Յունուար 4 է սկսեալ ՕՍՄԸՆԵԸՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ամսական տետրակները և կան հրատարակուիլ ՚ի Վ. Պօլիս, աշխատասիրութեամբ Յարգոյ Պ. Վ. Բարաղեանին և Տ. Զուխաճեանին:

Ազգասէր և բանիբուն հեղինակաց աշխատասիրութիւնները անշուշտ մեծ բնդունելութիւն պիտի գանեն Ազգիս մէջ, և Յարգոյ հասարակութիւնը զանոնք քանչալքելու համար պէտք եղած միջոցները կը պարտաւորի մատակարարել:

Տարեկան ստորագրութեան գինն է 120 դր. հեկան, իսկ ամն մէկ տետրակին գինը 15 դր կանխիկ վճարելի:

Ստորագրութեան տեղին է Պօլիս, և Իզմիր ստորագրուիլ ուղղութիւնը կրնան գիմել առ
ՅԱՄԲ ՏԵՏԵԸՆ

ՍԿՐՈՒՆԻ ԴԱՏԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Բ. Կարոյ

ԻՏԱԼԵՐԻՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

ԵՒ

ԹԱՆԳՐԱՆ ԼՕԳՆՅՈՒՆ ԵՐԳՈՑ

Թի- 1 և 2 պէտրակները

կը ծախուին Պ. Հայրապետ Հասկէքիլեանին քով:

ՀԱՐԱՐԻՐ - ՏՆՕՐԻՆ

Գ. ՉԻՒԻՆԿԻՐԵԸՆ

ԶՄԻՐՆԵԱ. Ի ՏԱՐԱՆԻ ՏԵՏԵԸՆ